36. ԻՐԵՔ ԿԼՈԽ

Մին շատ թամբալ, քյասիբ մարթ ա ինում։ Տա տրեսնում ա, վըեր ուրիշն տանը ուտելի վըեչ մին պեն չի մնացալ, քյինում ա Թաքուհուն կոշտը, կլոխ տում, ինգյում վըեններըը, ղաչանք-պըղատանք անում, ասում.—Խոխեքյըս սոված կուտորվում ըն, ինձ մին պեն տո, տանըեմ։ Թաքուհին խըղճմըտանքավ ա ինում, տրան մին քսակ վըեսկե յա տում, ասում.—Տար խոխըեքյըս պահե, վըեր մըեռնեմ, բիդի ինձ կլնա վուչ։

Էտ մարթը վըեսկեն յոր ա օնում, կլամ տոն։ Օտում ըն խոում, պրանվում, քոն ինում՝ էնքան, վըեր էտ վըեսկեն էլ ա պըրծնում։ Տա տրեսնում ա, վըեր վըեսկեն պըրծալ ա, տանն էլ ուտելի պեն չի կա, խոխեքյը հաց ըն օղում, բուրդան Թաքուհուն խոսկը մըեռան ա ինգյում։ Թաքուհի մնան Թաքուհին էլ մին տարե առաչ ա ինում մըեռած։ Տա ասում ա.—Հինչ ինում ա, Թող ինի, էս քշեր պիտի քյինում Թաքուհուն կյիրեզմանը։

Հղե յա ինում, քյինում։ Նըրեսն էլ մին պահ, մինգյել մին մեշուկ ա յոր օնում, ասում.—Թալի Թաքուհուն կյիրըզմանումը վըեսկե յա ինում, ածըեմ մեշուկը, պիրիմ...

Լունինգյա քշեր ա ինում։ Էտ մարթը քյինում ա Թաքուհուն կյիրեզմանը քանդում, ղոթին պեց անում։ Թաքուհին տրեղը նըստում ա, ասում.—Ես քեզ հինչ ըմ ա՞սալ, հոր ը՞ս եկալ։ Մարթն

ասում ա.—Թաքուհի, նր կաց, էլ էն տրեղը չի, քու տրեղը ա կյիրեզման կըմեննըմ, խոխեքյըս կուտորվում ըն, մին թանհր.ըրա։ Թաքուհին տրան իրեք կյիրեզման ա նշանց տում, ասում.—Քյինա էտ կյիրըզմըննըեն քանդի, կըլխըեն նր կալ, տար էտհինչ կաղնուն տակըեն մին տոն կա, տոռնը թակե ասե՝ կլոխ ըմ պերալ, նա յոր ա ունեական, հինչ ասրես, տա։ Թաքուհին էտրանն ասում ա, նի մեեում կյիրեզմանը։

Էտ մարթը Թաքուհուն կյիրեզմանը նորըմինան ծակում ա, վրեղը յիրան ածում, քյինամ էն նշանց տուված իրեք կյիրըզմանները քանդում, կլխըեն տուս օնում, քցում միշուկեն մալը, շիլանկում, քշերվա կեսին քյինամ կաղնուն տակըեն տանը տոռնը թակում։ Տնատարն ասում ա.—Հու վը՞ս, նի մըտ տրեսնամ։ Տա նի յա մեեում, մեշուկը վրեր տինում, ասում.—Ուրգեսն կլխըեն յըմ պերալ։ Տնատարը մեշուկը յոր ա օնում, տանը մալ տրեղը թափ տում, միշուկան իրեք կլոխ ա վրեր ինգյում, մինը թուլուլ ա ինում, ինգյնում կարավաթեն տակը, մինն ինգյնում ա տանը պոռախը, էն մինն էլ մնում ա տանը մալ տրեղը։ Տնատարը թունվանգյը յոր ա օնում, կարավաթեն տակն կըլխեն յիրա անում, գյունլյան մին ընգյունավ նի յա մեեում, էն մին ընգյունավը տուս կյամ։ Ասում ա՝ սա հեչ։ Պոռախն ինգյած կլխըեն ա յիրա անում, գյունլյան նի յա կյամ, առանց ծրկելի եա տրեռնում։ Ասում ա՝ սա յէլ հեչ։ Տանը մալ տրեղեն կլխըեն թունվանգյը վրեր յիրա յա անում, գյունլյան կլոխը ծակում ա, մնամ կլխումը։ Տնատարն ասում ա.—Ա՜յ, սա կլոխ ա, հինչ վրեր օգրես, կըտամ, իսկ էն էրկունը ինձ հարկավրեր չրեն, կարող ես եա յոր օնրես։ Տա թա՝ հինչ թափավո՞ւտ կա կըլխըեներեն մալին, կլոխը կլոխ ա իլի։ Տնատարը ասում ա.—Չէ՛, կլխան կլոխ թափավուտ շատ կա, էն կարավաթրեն տակրեն կլոխը քու կլխրեա մնան ա, Թաքուհին վրեր ասալ ա՝ կոշտրս չի կլաս, ըսկացալ չրս, խոսկը մին ընչուկավրա նի յա մտալ, մինավը տուս եկալ, էն պուռախրեն կլոխը՝ վրեր գյունլյան նի յա եկալ, ծակալ չի, նա քրզանա մոտե մարթ ա իլալ, հինչ վրեր ասալ ըն, կլոխը նի չի մտալ, ինձ իսի կլոխն էլ չի հարկավրեր, էն տանը մալ տրեղեն կլոխը. վրեր գյունլյան ծակալ ա մնացալ մալին՝ տուս չի եկալ, տա հունց մարթ ա իլալ, վրեր հինչ ասալ ըն, մնացալ ա կլխումը, էտ կլխրեն հինչ օգրես, կըտամ։ Էտ մարթն ասում ա.—Մին քրսակ վրեսկե տու։ Տնատարը մին քսակ վրեսկե յա տում, էտ մին կլոխը յոր օնում, էտ մարթին էլ ասում.—Քյինա՜, սորաս եաը հինչ վրեր ասրեն, թող կլխումըտ մնա։